ԼՈՌՎԱ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ (1880—90-ական թվականներ)

ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

XIX—XX դդ. սահմանագծում Լոռիում կենտրոնացած էր արևելահայ պրոլետարիատի ամենաստվար ջոկատը։ Այս շրջանի հետ են կապվում նաև Արևելյան Հայաստանի բանվորական շարժման առաջին քայլերն ու մարքսիստական կազմակերպությունների ծնունդը։ Ուշագրավ է, որ հենց այստեղ տեղի ունեցավ արևելահայ գյուղացիական շարժումների պատմության մեջ ամենանշանակալից՝ Հաղպատի 1903 թ. ելույթը։ Այս հարցերը մեր պատմագիտության մեջ բավականաչափ լուսաբանված են։ Սակայն նույնը չի կարելի ասել դարավերջի Լոռվա գյուղացիական շարժումների վերաբերյալ։ Հայ գյուղացիության պատմության երախտավոր Վ. Ռշտունին այս կապակցությամբ գրում է. «Բոլորովին պատահական են մեր ունեցած տեղեկությունները Զանգեզուրի և Լոռվա այդ տարիների (XIX դ. վերջ—Վ. Հ.) գյուղացիական ելույթների մասին։ Այդ խնդիրը կարոտ է հատուկ ուսումնասիրության»[1]։ Նույն միտքն է հայտնում նաև Խ. Ավդալբեգյանը[2]։

1880-ական թվականներին Լոռվա գյուղացիության ճնշող մեծամասնությունը պետական էր։ Դարավերջին Լոռվա պետական գյուղացիական ծխերը կազմում էին ընդհանուրի մոտ 89%-ը[3]։ Ինչպես կալվածատիրական, այնպես էլ պետական գյուղացիությունը հողի մեծ կարիք էր զգում։ Այսպես, օրինակ, Բորչալուի գավառում պետական գյուղացիության մեկ շնչին ընկնող հողաբաժինը կազմում էր մինչև 2 դեսյատին[4], իսկ Լոռվա տեղամասի Ղամշկուտ (Եղեգնուտ) գյուղում՝ 0,71, Քոլագերանում (Անտառամուտ)՝ 0,76, Շահալիում (Վահագնի)՝ 0,83, Դարաքենդում (Զորագյուղ)՝ 0,93 դեսյատին և այլն[5]։

Դրությունն ավելի վատթար էր Լոռվա կալվածատիրական գյուղերում, որտեղ մեկ ծխին ընկնող հողաբաժինը մոտ 2,3 դեսյատին էր։ Իսկ Որնակ

---

1 Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, հ. Բ, Երևան, 1968, էջ 128։

2 Խ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 149։

3 ՎՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 244, ց. 3, գ. 390, թ. 6, 43, ֆ. 17, ց. 1, գ. 2294, թ. 28—29, «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края» (այսուհետև՝ «Материалы...»), т. VII, Тифлис, 1887, էջ 483։

4 И. Антелава, Государственные крестьяне Грузии в XIX веке, т. II, Тбилиси, 1962, էջ 311։

5 «Материалы...», т. VII, էջ 515—518։

(Ակներ) և Սանահին գյուղերում այն համապատասխանաբար կազմում էր 1,7 և 1,3 դեսյատին[6]։ Ականատեսի վկայությամբ՝ «Լոռու ազնվականաց գյուղերում բնակվող գեղջուկները այնպես են ճնշված իրենց ազնվականներից, ինչպես ճանապարհի միջին բսած խոտը, որին ամեն անցնող տրորում, ոտնատակ է տալիս»[7]։

Լոռվա կալվածատիրական գյուղացիության անապահով կյանքի նկարագիրը կարելի է գտնել Ալ. Շիրվանզադեի «Լոռվա ձորերում» ակնարկում, որը նա գրել է 1888 թ. Լոռիում կատարած շրջագայության ազդեցությամբ։ «Որնակ գյուղն իր արտաքին տեսքով ավելի ողորմելի երևաց ինձ, քան Հաղբատը,— գրում է Շիրվանզադեն։— Խոտից, փայտից և տեղ-տեղ խճից մի կերսլ հորինած խղճուկ խրճիթների մի քանի շարք—դա է գյուղը։ Մանուկները մերկանդամ, կանայք ոտաբոբիկ, տղամարդիկ ընկճված դառն աշխատանքի և աղքատության լծի ներքո, խեղճ, ողորմելի, միանգամայն ողորմելի արարածներ։

Թե՛ Հաղբատ, և թե՛ այստեղ հողի ահագին պակասություն ունեն գյուղացիները։ Շրջակայքը անմերձենալի ժայռեր և անտառապատ սարեր, երկրագործության պիտանի հողի մի փոքրիկ տարածություն, ճանապարհների կատարյալ բացակայություն—ահա գյուղը, ահա գյուղացիների վիճակը։

Այս բավական չէ. Հաղբատում գանգատներ էին լսվում, թե կալվածատեր ոմն իշխան Բարաթովը հետզհետե խլում է գյուղի հողերը, թե գյուղացիները քանի գնում այնքան աղքատանում են»[8]։

Լոռվա հողասակավ գյուղացիությունը ստիպված էր համառ պայքար մղել իր ամենակենսական հարցի՝ հողի համար, դիմելով պայքարի մեծ մասամբ պասսիվ, երբեմն էլ ակտիվ ձևերի։ Գյուղացիական խնդրագրերի ու բողոքագրերի պատասխանները իշխանության տեղական և բարձրագույն մարմինները համառորեն ձգձգում էին և պատահական չէ, որ գյուղացիության պայքարը գնալով ստանում էր համառ բնույթ։

Բորչալուի գավառի պետական գյուղացիների տնտեսական կյանքն ուսումնասիրող Ալ. Երիցյանը նշում է, որ գավառում շրջագայելիս Լոռվա տեղամասի համարյա բոլոր գյուղերի բնակիչներն իրեն բողոքներ են ներկայացրել սակավահողության, հողերի զավթման, կալվածատերերի ու անտառային տեսչության ճնշումների, ավազակության կապակցությամբ[9]։ Լոռվա տեղամասի ոստիկանության պետի գրասենյակում 1885 թ. դեռևս լուծում չէին ստացել 1878—1884 թթ. վերաբերող 476 գործ։ Միայն 1885 թ. այդտեղ ընդունվել էր 2676 գործ, իսկ գավառապետի գրասենյակում՝ 7552[10]։ Դրանց ճնշող մեծամասնությունը գյուղացիական խնդրագրեր ու բողոքագրեր էին։

1880 թ., երբ Թիֆլիսի նահանգապետը ժամանել էր Ջալալօղլի (Ստեփանավան), Լոռվա տեղամասի շատ գյուղեր խնդրագրերով ու բողոքագրերով ներկայացուցիչներ են ուղարկում նրա մոտ։ Նահանգապետը խոստա-

---

6 Հ. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում. Երևան, 1957, էջ 13։

7 «Արձագանք», 1896, № 72։

8 Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1961, էջ 36—37։

9 «Материалы...», т. VII, էջ 416—424։

10 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 2294, թ. 35։

նում է զբաղվել նրանց հողով բավարարելու հարցով[11]։ Նա Կովկասի փոխարքային գրում է, որ լրացուցիչ հողեր ստանալու ակնկալությամբ Լոռվա տեղամասի պետական բոլոր գյուղերի բնակիչների կողմից իր հասցեով անդադար ստացվում են նորանոր խնդրագրեր։ Նահանգապետը նպատակահարմար է գտնում կազմել հատուկ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Լոռվա գյուղացիության հողային հարցերի քննարկմամբ և գյուղերի միջև հողի հավասարար բաժանման վերաբերյալ նախագծի կազմմամբ։

1881 թ. Սղնախի գավառապետ կոմս Տիգենհաուզենի գլխավորությամբ ստեղծվում է նման հանձնաժողով[12]։ Սակայն տարի ու կես ձգձգվում է աշխատանքներն սկսելու համար անհրաժեշտ մի քանի հարյուր ռուբլի տրամադրելու հարցի լուծումը, և հանձնաժողովը ձեռնամուխ է լինում գործի միայն 1882 թ. կեսերին։ Թե որքան գոյատևեց և ինչպիսի արդյունքների հասավ «Լոռվա հանձնաժողովը», տեղեկություններ չկան։ Սակայն վերջինիս գործունեության իրական հանրագումարն ու գնահատականը կարելի է գտնել գյուղացիական այն բազում խնդրագրերում ու բողոքագրերում, որոնց հոսքը հետագա տարիներին ամենևին էլ չպակասեց։

Հարևան գյուղերի հետ հողային վեճերի կարգավորման և լրացուցիչ հողեր ստանալու նպատակով Բորչալուի գավառի Լոռի (Լոռի բերդ) գյուղի բնակիչները 1880 թ. Թիֆլիսի նահանգապետին գրում են, որ իրենք արդեն երրորդ անգամ են դիմում, սակայն դրությունը շարունակում է մնալ նույնը։ 1881 թ. նույն հասցեով գյուղացիներն ուղարկում են չորրորդ խնդրագիրը, 1884 թ.՝ հինգերորդ։ 1900 թ. Լոռի գյուղի բնակիչները դիմում են արդեն Կովկասի կառավարչապետին, սակայն նրանց խնդրանքը կրկին մնում է անհետևանք[13]։

Պետական ագատ հողերի վրա տեղափոխվելու ակնկալությամբ Բորչալուի գավառի Ղզըլքիլիսա (Ղզըրդաշ) գյուղի 18 սակավահող ընտանիքներ 1891 թ. դիմում են պետական ունեցվածքների մինիստրին։ Գոհացում չստանալով, մեկ տարի անց նրանք խնդրագիրը հասցեագրում են Ալեքսանդր III-ին[14]։ Նույնպիսի խնդրանքով 1894 թ. Կովկասի կառավարչապետին են դիմում Աքորի գյուղի բնակիչները։ 1898 թ. նրանց երկրորդ փորձը նույնպես մնում է անարդյունք[15]։

Լրացուցիչ հողեր ձեռք բերելու նպատակով 1890—1900 թթ. Լոռվա տեղամասի Հոբարձի գյուղի բնակիչները վերադաս մարմիններին տասնյակ խնդրագրեր են ուղարկել, բայց նրանց խնդրանքը միշտ մերժվել է[16]։ Նույնպիսի բախտի են արժանացել նաև 1885 թ. Արճիս և Լճկաձոր, 1889 թ.՝ Գյուլագարակ, 1894 թ.՝ Քոլագերան, 1895 թ.՝ Հայկական Գյառգյառ (Գյառգյառ), 1898 թ.՝ Ջալալօղլի և այլ գյուղերի բնակիչների խնդրագրերը[17]։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում դարավերջին Լոռիում ևս ավելի հաճախակի են դառնում ունևոր անձանց

---

11 Նույն տեղում, ֆ. 244, ց. 3, գ. 390, թ. 1։

12 Նույն տեղում, թ. 58։

13 Նույն տեղում, ֆ. 17, ց. 1, գ. 9003, թ. 1—4, գ. 9429, թ. 5, ֆ. 12, ց. 10, գ. 1157, թ. 3։

14 ՍՍՀՄ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ՊԿՊԱ) ֆ. 381, ց. 27, գ. 17327, թ. 1, 11—12։

15 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 10, գ. 836, թ. 1—2։

16 Նույն տեղում, ֆ. 244, ց. 4, գ. 704։

17 Նույն տեղում, ֆ. 12, ց. 10, գ. 424, 817, ֆ. 244, ց. 3, գ. 514, 773, ց. 4, գ. 810։

կողմից գյուղացիական հողաբաժինների զավթման դեպքերը։ Այդպիսիք տեղի են ունեցել Լոռվա Ջալալօղլի, Օձուն, Խաչիգյուղ (Դեբետ), Դսեղ (Թումանյան) և բազմաթիվ այլ գյուղերում[18]։

Ուշագրավ է Բոբչալուի գավառի Շնող գյուղի բնակիչների և իշխան Բարաթովի միջև ծավալված հողային վեճը։ Դեռևս 1893 թ. Թիֆլիսի դատական ատյանը քննելով այդ վեճը, որոշում է անհիմն համարել Բարաթովի հավակնություններն այդ հողերի նկատմամբ։ Ցցանկանալով հաշտվել այդ որոշման հետ, Բարաթովը 1896 թ. մարտին դիմում է Նիկոլայ II-ին։ Հիշեցնելով գահին իր նախնիների մատուցած «հավատարիմ և անձնուրաց ծառայությունները», նա թագավորին խնդրում է պաշտպանել իր «իրավունքները»[19]։ Գործն անմիջապես վերանայման է ենթարկվում։ Հողագործության և պետական գույքերի մինիստրության լիազորն այդ կապակցությամբ լրացուցիչ տեղեկություններ է ուղարկում Պետերբուրգ։ Դրանցից պարզվում է, որ վիճելի հողերից, որոնք կազմում էին 1543 դեսյատին (անտառ, վարելահող, խոտհարք և այլն), հնուց ի վեր օգտվել են մոտակա Շնող գյուղի բնակիչները։ Թե որքանով են անհրաժեշտ այդ հողերը շնողցիներին, երևում է այն բանից, նշում էր լիազորը, որ 257 ծուխ ունեցող (2800 շոմոչ) գյուղն ունի ընդամենը 400 դեսյատին վարելահող, այսինքն՝ 1,55 դեսյատին ծխին[20]։ Հողագործության և պետական ունեցվածքների մինիստր Երմոլովը կայսերական գրասենյակին ուղղած իր զեկուցագրում նույնպես ընդունում է այդ հողերի կենսական նշանակությունը Շնող գյուղի բնակիչների համար։ Միաժամանակ նա ուշադրություն է հրավիրում հետևյալ հանգամանքի վրա. «Իշխան Բարաթովը պատկանում է Թիֆլիսի նահանգի առավել խոշոր և ունևոր հողատերերի թվին»[21], այսինքն ասել կուզե, որ հարցը գյուղացիների օգտին լուծելու դեպքում Բարաթովի շահերին լուրջ վտանգ սպառնալ չի կարող, քանի որ անհամեմատ փոքր է վերոհիշյալ հողերի նշանակությունը այդ մեծահարուստ կալվածատիրոջ համար։

1884 թ. Ուռուտ գյուղի բնակիչները Թիֆլիսի նահանգապետին գրում են, որ կալվածատեր Խան-Աղովը, որը շատ դժբախտություններ է պատճառել իրենց, զավթել է գյուղացիական հողաբաժինները և, ինչպես միշտ, շարունակում է մնալ անպատիժ։ Գյուղացիները խնդրում են «մեկընդմիշտ ազատել իրենց այդ ագահ անձնավորությունից»[22]։ Խան-Աղովի մասին նույնպիսի վրդովմունքով նահանգապետին գրում են Լոռվա տեղամասի Նովո-Ալեքսանդրովկա (Մաքսիմ Գորկի) գյուղի բնակիչները։ Նրանք նշում են, որ արդեն 20 տարի է, ինչ պայքարում են Խան-Աղովի դեմ, որն իրենցից զավթել է 268 դեսյատին հող[23]։

Հողատեր Խան-Աղովի հետ ունեցած հողային վեճերը քացահայտ պայքարի են վերածվում Վարդաբլուր և Կուրթան գյուղերում։ Ալ. Երիցյանը նշում է, որ 1883 թ. դատարանի որոշմամբ Կուրթան գյուղի հողաբաժնից 180 դեսյատին անցավ Խան-Աղովին, որի հետևանքով գյուղացիներն այնպիսի

---

18 «Материалы...», т. VII, էջ 417, 423, ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 116, ց. 1, գ. 865, թ. 20—21։
19 ՍԱՀՄ ՊԿՊԱ, ֆ. 396, ց. 9, գ. 107, թ. 4։
20 Նույն տեղում, թ. 5։
21 Նույն տեղում, թ. 8։
22 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 17, ց. 1, գ. 9429, թ. 1։
23 Նույն տեղում, թ. 22։

դրության մեջ դրվեցին, որ որոշեցին հարևան վարդաբլուրցիների հետ մեկտեղ (նրանցից էլ Խան-Աղովը զավթել էր ավելի քան 109 դեսյատին հող) դիմագրավել իշխանություններին[24]։ Այսպիսով, ընդդիմանալով Թիֆլիսի դատական ատյանի որոշմանը, համաձայն որի իրենց օգտագործման տակ գտնվող պետական հողերի որոշ մասը դառնում էր Խան-Աղովի սեփականությունը, Կուրթան և Վարդաբլուր գյուղերի բնակիչները զինված դիմադրություն ցույց տվեցին իշխանության ներկայացուցիչներին[25]։

1884 թ. ամռանը, երբ հողաչափ Սարկիսովը փորձում էր սահմանագծել վիճելի հողերը, երկու գյուղերի բնակիչները շրջապատեցին նրան և մահվան սպառնալիքով պահանջեցին դադարեցնել աշխատանքները։ Հողաչափը ստիպված փախչում է Թիֆլիս։ Հույս ունենալով փոխել դատական ատյանի որոշումը, գյուղացիները, խնդրարկության նպատակով, Պետերբուրգ են ուղարկում իրենց ներկայացուցիչներին։ Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ՝ Սարկիսովը սեպտեմբերի 18-ին նորից է հայտնվում սահմանագծման վայրում՝ կազակների և ոստիկանության աստիճանավորների ուղեկցությամբ։ Այստեղ նախապես հավաքված կուրթանցիներն ու վարդաբլուրցիները (մոտ 200 հոգի) խնդրում են մինչև Պետերբուրգից իրենց համագյուղացիների վերադառնալը հետաձգել սահմանագծման աշխատանքները։ Մերժում ստանալով, նրանք հարձակվում են աստիճանավորների և կազակների վրա։ Իշխանության ներկայացուցիչները դիմում են փախուստի։ Զայրացած ամբոխը նրանց հետևում է այնքան, մինչև որ կազակները կրակ են բացում օդում[26]։

Սակայն շուտով Կուրթան և Վարդաբլուր գյուղերի բնակիչների ելույթը ճնշվում է։ Մի քանի շաբաթով 100 կազակներից բաղկացած էկզեկուցիա է նշանակվում այդ գյուղերում[27]։ Թիֆլիսի նահանգապետը շտապում է կառավարչապետին զեկուցել, որ դրությունը խաղաղվել է, գործը հանձնվել հետաքննության, իսկ «անկարգության» գլխավոր մեղավորները ձերբակալվել են։ Կառավարչապետը Թիֆլիսի դատական ատյանի դատախազին միջնորդում է, որ այդ գործին հատկացվի հատուկ ուշադրություն և որ «անկարգության» գլխավոր մեղսակիցները պատժվեն[28]։ Այդպես էլ լինում է։ 25 գյուղացիներ նստում են մեղադրյալի աթոռին[29]։

Կուրթան և Վարդաբլուր գյուղերի բնակիչների պայքարը հողի համար չի դադարում նաև հետագա տարիներին։ Խան-Աղովի հետ ունեցած վեճի կապակցությամբ, 1888 թ., կուրթանցիները դիմում են նույնիսկ Ալեքսանդր III-ին[30]։ Ահա թե 1897 թ. նրանք ինչ են գրում Կովկասի կառավարչապետին. «Վիճելի հողերի վերաբերյալ թող հարցնեն շրջակա գյուղերի բնակիչներին, որոնց վրա Խան-Աղովները ոչ մի իրավունք չունեն, բացի ուժեղի իրավունքից»[31]։

---

24 «Материалы...», т. VII, էջ 419։
25 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 16, գ. 30։
26 Նույն տեղում, թ. 2—3։
27 «Материалы...», т. VII, էջ 419։
28 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 16, գ. 30, թ. 3, 7։
29 Նույն տեղում, ֆ. 116, ց. 1, գ. 694, թ. 2։
30 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1405, ց. 90, գ. 7164։
31 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 2351, թ. 6։

1893 թ. ապրիլին գյուղացիական լուրջ հուզումներ են տեղի ունենում Մեծ Ղարաքիլիսա (Կիրովական) գյուղում[32]։ Մեծահարուստ կալվածատիրուհի Բագրատիոն-Մուխրանսկայան, որը տարիներ շարունակ իր հողերը վարձակալման էր հանձնում Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչներին, հետագա վարձակալման պայմանների շուրջ վերջիններիս հետ համաձայնության չգալով, ցանկանում է հողերը տրամադրել Նովո-Միխայլովկա գյուղին։ 1893 թ. պետական ունեցվածքների մինիստրությունն այդ հողերի փոխարեն Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերին հող է հատկացնում Ալեքսանդրապոլի գավառում։ Սակայն գյուղացիները, որոնք ավելի քան 70 տարի ապրում և աշխատում էին այդ արգավանդ հողերի վրա, չցանկացան դրանք փոխարինել անմշակ հողերի հետ։ Նրանք հրաժարվում են կատարել կալվածատիրոջ կամքը, հետևաբար և ճանաչել նրա սեփականատիրական իրավունքներն այդ հողերի նկատմամբ ու կազմակերպված ոտքի են կանգնում իրենց շահերը պաշտպանելու։ Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչները համոզված էին, որ եթե Նովոմիխայլովցիներին թույլ չտան վարձակալել այդ հողերը, ապա Բագրատիոն-Մուխրանսկայան, ի վերջո, տեղի կտա։

Հարցը կարգավորելու նպատակով մի խումբ հեծյալ ստորադրյալների ուղեկցությամբ Նովո-Միխայլովկա է գալիս Լոռվա պրիստավը։ Նրա ներկայությամբ անգամ Նովոմիխայլովցիները չեն կարողանում մոտենալ Մեծ Ղարաքիլիսա գյուղի հողերին, որովհետև այնտեղ նախապես հավաքված են լինում պատահական միջոցներով զինված ղարաքիլիսցիները։ Գյուղացիները հարձակվում են պրիստավի և հեծյալների վրա։ Երբ պրիստավը հրամայում է ձերբակալել առավել ակտիվ գյուղացիներից մեկին, գյուղացիները գոչերով, որ իրենք բոլորն են ապստամբում, թափվում են հեծյալների վրա և աղատում իրենց համագյուղացուն։ Վերջինիս նորից են ձերբակալում և տեսարանը նույնությամբ կրկնվում է։ Լոռվա պրիստավը Բորչալուի գավառապետին գրում էր. «Դա պատահական հավաք չէր, այլ համարյա հրամանով գործող բավական կազմակերպված ամբոխ։ Լուրեր են պտտվում, որ ղարաքիլիսցիները նախապես միմյանց գրավոր պարտավորություն էին տվել ոչ մի բանի առաջ չնահանջել և հարկ եղած դեպքում օգտագործել նույնիսկ զենք»[33]։

Արխիվային նյութերը խոսում են ղարաքիլիսցիների և շիշթափացիների տևական պայքարի մասին, որոնք պատրաստ էին հողի համար «մորթոտվել մինչև վերջին մարդը, ավելի շուտ ուտել այդ հողը, բայց չզրկվել դրանից»[34]։ Այդ նյութերը, սակայն, խոսում են նաև այն համառության մասին, որով իշխանությունները ձգտում էին կատարել Բագրատիոն-Մուխրանսկայայի կամքը։ Գավառապետին ուղղած զեկուցագրում Լոռվա պրիստավը նշում է, որ առանց զինվորական լուրջ օգնության հնարավոր չէ ղարաքիլիսցիներին հնազանդ պահել և քանի որ ինքը հնարավորություն չունի մշտապես գտնվելու Շիշթափայում և Մեծ Ղարաքիլիսայում, ապա ընդհարումներից խուսափելու նպատակով խնդրում է վերոհիշյալ գյուղերում կազակներ պահել։ Միա-

32 Նույն տեղում, ֆ. 17, ց. 1, գ. 3338։
33 Նույն տեղում, թ. 5։
34 Նույն տեղում, թ. 5, 17։

ժամանակ հարկավոր է այդ գյուղերի բնակիչներին հասկացնել տալ, որ այդ հողերն իրենց համար առհավետ կորած են[35]։

Գյուղացիների ըմբոստացման լուրն անհանգստացնում է նաև Թիֆլիսի նահանգապետին, որը շտապում է Կովկասի կառավարչապետ Շերեմետևին տեղեկացնել, որ կարգ ու կանոնի վերականգնման և գլխավոր մեղավորների ձերբակալման նպատակով Մեծ Ղարաքիլիսա է ուղարկվել 15 կազակ։ Հետագա լուրջ հուզումներից խուսափելու նպատակով նահանգապետը կառավարչապետից թույլտվություն է խնդրում Մետեխի բանտը նետել առավել ակտիվ գյուղացիներին[36]։ Կառավարչապետը նահանգապետից պահանջում է հետևյալը. «Հաշվի առնելով Շիշթափա և Մեծ Ղարաքիլիսա գյուղերի բնակիչների կողմից հողերի բռնի գրավումը, ոստիկանությանը համառ դիմադրություն ցույց տալը, պաշտոնատար անձանց վիրավորելը, ես անհրաժեշտ եմ համարում մեղավորներին օրինակելի պատժի ենթարկել և դրա համար Մեծ Ղարաքիլիսա գյուղն էկզեկուցիայի ենթարկել երկու շաբաթով, ուղարկելով այնտեղ կազակների կես հարյուրյակ (մթերքը բնակչության հաշվին)։ Միաժամանակ բանտ նետել անկարգության գլխավոր մասնակիցներին։ Ի կատարումն սրանց՝ կպատսեմ Ձեր զեկուցագրին»[37]։ Կովկասի կառավարչապետը էկզեկուցիա է նշանակում, որպեսզի, ինչպես ինքն է նշում, բնակչությանը պարզ լինի «իր վարքագծի ողջ հանցանքը», որ ապագայում ամենափոքրագույն անկարգության դեպքում իսկ կձեռնարկվեն կտրուկ վարչական խիստ միջոցառումներ[38]։

Առավել ակտիվ տասը գյուղացիներ նետվում են Մետեխի բանտը։ Նրանք Թիֆլիսի նահանգապետին գրում են, որ անարդարացի են համարում իրենց դեմ ուղղված մեղադրանքը և խնդրում վերջինիս՝ ճիշտ ընթացք տալ գործին և օգնել իրենց, քանի որ բարոյական-ֆիզիկական տանջանքի են ենթարկվում ոչ միայն իրենք, այլև իրենց դժբախտ ընտանիքները, որոնք հանձնվել են բախտի քմահաճույքին[39]։ Շատ հասկանալի պատճառով նահանգապետը մերժում է այդ խնդրանքը։

Արխիվային գործում գյուղացիական այս ելույթի վերաբերյալ այլ տեղեկություններ չկան, սակայն եղածն էլ բավարար հիմք է տալիս ասելու, որ հողի համար Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչների պայքարը Արևելյան Հայաստանի XIX դ. վերջի գյուղացիական շարժումների առավել նշանակալից դրվագներից է։

Բագրատիոն-Մուխրանսկայայի հողերի փոխարեն Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչներին Ալեքսանդրապոլի գավառում հատկացված հողաբաժինները թե՛ քանակապես, թե՛ որակապես հեռու էին բավարար լինելուց։ Այդ են վկայում վերոհիշյալ գյուղերի՝ այդտեղ տեղափոխված բնակիչների բազմաթիվ խնդրագրերը՝ ուղղված վերադաս մարմիններին։ 1894 թ. ղարաքիլիսացիները պետական ունեցվածքների մինիստրի Կովկասի լիազորին գրում են, որ Բագրատիոն-Մուխրանսկայայի հողերից վտարվելուց հետո

35 Նույն տեղում, թ. 3—5։
36 Նույն տեղում, թ. 8։
37 Նույն տեղում, թ. 11։
38 Նույն տեղում, թ. 15։
39 Նույն տեղում, թ. 23։

իրենց հատկացված հողը պիտանի չէ վարելու համար և խնդրում են այլ հողակաոր տրամադրել։ 1895 և 1900 թթ. նրանց նոր խնդրագրերը նույնպես մնում են անհետևանք[40]։

1894 թ. նույն հասցեով դիմում են նաև Շիշթափա գյուղի բնակիչները և խնդրում հող տրամադրել այլ վայրերում, սակայն մերժում են ստանում[41]։ 1896 թ. Կարսի մարզ տեղափոխվելու նպատակով նրանք դիմում են Կովկասի կառավարչապետին։ Գյուղացիները հույս ունեին այնտեղ սահանալ հողային ազատ տարածություններ։ Սակայն նրանց այս խնդրանքը ևս մերժվում է։ Լրացուցիչ հողեր ձեռք բերելու նպատակով շիշթափացիները 1896 թ. դիմում են թագավորին, սակայն ապարդյուն[42]։ Դրանից հետո էլ ամեն տարի գյուղացիները նույն հարցը բարձրացնում էին կովկասյան իշխանությունների առջև, սակայն միշտ ապարդյուն[43]։

Այսպիսով, XIX դ. վերջին Լոռվա գյուղացիության պայքարը տարբեր դրսևորումներ է ունեցել։ Այն արտահայտվել է խնդրագրերի ու բողոքագրերի ձևով, հաճախ երկչոտ անհնազանդության ու պասիվ դիմադրության փորձերով և նկատելի ըմբոստացումներով։ Պայքարի այս ձևերը հաճախ լրացնում էին միմյանց, հանդես գալիս հաջորդաբար, իսկ երբեմն էլ՝ միաժամանակ։ Վարդաբլուր, Կուրթան, Մեծ Ղարաքիլիսա և Շիշթափա գյուղերի բնակիչների՝ հողի համար մղած երկարատև պայքարը դրա լավագույն դրսևորումն է։ Գյուղացիական այդ հուզումները Լոռվա գյուղացիության դասակարգային պայքարի ուշագրավ էջերից են։

БОРЬБА ЛОРИЙСКОГО КРЕСТЬЯНСТВА ЗА ЗЕМЛЮ
(1880—90-ые годы)

ВАЧЕ ОВАКИМЯН

Резюме

Материалы, освещающие крестьянское движение в Лори, пока немногочисленны. Крестьянство Лори в конце прошлого века испытывало острую земельную нужду. Борьба за землю являлась осью крестьянского движения. Зачастую эта борьба была упорной и продолжительной, как, например, крестьянские волнения в селах Вардаблур, Куртан (1884 г.), Большой Караклис (1893 г.). Эти волнения являются примечательными страницами истории классовой борьбы крестьянства Лори.

---

40 Նույն տեղում, ֆ. 243, ց. 5, գ. 376, թ. 7, 11, ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 396, ց. 2, գ. 618։
41 ՎԱՍՀ ՊԿՊԱ, ֆ. 243, ց. 5, գ. 332։
42 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 381, ց. 29, գ. 18770։
43 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 243, ց. 5, գ. 332։